

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Հայրենիքը գնահատում է արժանավորներին

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով հանրապետության տոնի առթիվ մայիսի 26-ին պետական պարգևներ և պատվավոր կոչումներ շնորհվեցին գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության և այլ ոլորտների մի խումբ ներկայացուցիչների:

ՀՀ համակարգից պարգևի են արժանացել:
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մայա ԻՆՃԻԿՅԱՆԻՆ շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում:
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեկսան ԴՈՒՆԻՍՅԱՆԻՆ շնորհվել է մշակույթի վաստակավոր գործչի կոչում:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յակով ԽԱՉԻԿՅԱՆԸ և ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտատպական ՊԲԲ ընկերության տնօրեն Վաչե ՀՈՎԱԿԻՍՅԱՆԸ պարգևատրվել են Մովսես Խորենացու մեդալով:

ՀՀ նախագահը «Տիգրան Մեծ» շքանշան հանձնեց մեծանուն գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆԻՆ, որը այդ պարգևին արժանացել էր ծննդյան 90 - ամյակի առթիվ:

ՀԱՅԿԱԶՁՈՒՆՆԵՐ. Առասպել և Պատմություն


Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում հունիսի 5-ից 6-ը տեղի ունեցավ միջազգային գիտաժողովներից մեկը:
«Հայկազուններ. առասպել և պատմություն» միջազգային գիտաժողովը նվիրված էր պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ե-

րեք նշանավոր գրքերից Ա գրքին, որտեղ վաղմիջնադարյան հայ պատմիչը պարզաբանել է այս գիրքը ստեղծելու նպատակները, նրա համար պահանջվող և գտած աղբյուրները և մագաղաթին հանձնել Հայոց նախնիների Հայկազունները հաստատագրված են նաև մյուս նշանավոր պատմական գործում՝ Սեբեոս եպիսկոպոսի Պատմության մեջ:

Այժմ՝ ավելի քան հազար հինգ հարյուր տարի անց, գիտնականները միավորվել և անդրադառնում են Հայկազուններին՝ խնդիրը վերնագրելով «առասպել և պատմություն»:
Կարծես սրանից երևում է, որ փորձ է արվել տրոհել, հնարավորինս տա-

րանջատել ու դասդասել այն, ինչ իրական փաստ է, և այն, ինչ նախնիների մտքի երևակայություն, իղծերի, պատկերացումների և գեղագիտական ընկալումների գեղեցիկ մարմնավորում է, այլ կերպ ասած՝ առասպել: Սա կատարել է իր ժամանակի դիրքերից և հնարավորություններից ելնելով արդեն իսկ խորենացին: Պատմահայրը իր գրքի բոլոր հատվածները շարադրելիս նախ ընթերցողին ծանոթացրել է այն սկզբնաղբյուրներին, որոնց հիման վրա տվել է շարադրանքը, արտահայտել է իր վերաբերմունքը դեպի այդ աղբյուրները, չի զլացել ընդգրկել իր գործում անգամ անհավաստի կամ այդպիսին թվացող աղբյուրները՝ փրկելու համար դրանք ոչնչացումից:

Որքան էլ անսպասելի լինի, մեր գիտաժողովի նպատակն էլ նույնն է, այսինքն՝ մերօրյա գիտնականները խորենացու, Սեբեոսի և նրանց հարող պատմիչների կրտսեր գործընկերներն են և շարունակեցին նրա որդեգրած ե- > 4



Ծննդյան 125-ամյակի առթիվ

Աշուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Գիտնականի կյանքն ու գործը

XX դարի հայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ և պատմաբան Աշուր Գարեգինի Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին, Շուշի քաղաքում: Մահացել է 1972 թ. հունիսի 30-ին, 85 տարեկան հասակում: Նրա կյանքը հետաքրքրական և ուսանելի է շար կողմերով՝ և՛ որպես մարդ, և՛ որպես ազգային գործիչ, և՛ որպես գիտնական: Ապրելով և գործելով հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող ժամանակաշրջանում՝ նա ամենագործուն մասնակցություն է ունեցել գրեթե բոլոր իրադարձություններին, գործով, խոսքով ու գրքով արտահայտել դարաշրջանի ոգին: Ա. Հովհաննիսյանը սկզբնական կրթությունը ստացել է Շուշի քաղաքի ռեալական վարժարանում: Նրա պատմա-գիտության և վաղ երիտասարդական փորձիներին Շուշիի հակամարտ հասարակական-քաղաքական հոսանքների, գաղափարական իրարամերձ խմբավորումների մի ուրույն կենտրոն էր:

Ա. Հովհաննիսյանն անվերապահորեն կանգնում է սոցիալ-դեմոկրատական հոսանքի ուղղության վրա: Վլ. Կասպարովի և իր դասընկերոջ՝ Հայկ Գյուլիքևիսյանի հետ ևս 1905 թ. ղեկավարում է ռեալական ուսումնարանի աշակերտական դասադուլը և գրում հակացարական բովանդակություն ունեցող թռուցիկներ, որոնցում հայոց լեզվի դասավանդումն ուսումնարանում պարտադիր դարձնելու պահանջ է ներկայացնում: > 4

ՀՀ նախագահի 2011 թվի մրցանակի են արժանացել

«Կարծում եմ՝ առանձնահատուկ զգացումով են ներկաներն ընդունում այն փաստը, որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդի համար Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին է արժանանում Թուրքիայի քաղաքացի Ռազմի Ջարաբլուն: Նրա գործունեությունը բացառիկ առաքելություն է»,- մայիսի վերջերին Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած ՀՀ նախագահի 2011 թ. մրցանակների հանձնման արարողության ժամանակ հայտարարել է Սերժ Սարգսյանը:



«Պատմական ճշմարտությունը Թուրքիայի հասարակությանը հասցնելու համար մղած նրա պայքարը բարձր քաղաքացիական դիրքորոշման և խիզախության փայլուն օրինակ է: Խիզախություն է նաև Ձեր այսօր այստեղ գտնվելը և այս մրցանակն ընդունելը: Ձեր այս կեցվածքն ունի ոչ միայն անցյալն ավելի խոր հասկանալու նպատակ, այլև ուղղված է հարևան ժողովուրդների փոխադարձ հասկացողությունը նոր մակարդակի բարձրացնելուն: Այն ուղղված է ապագային: Շնորհակալ եմ Ձեզ»,- դիմելով թուրք հայտնի մտավորականին՝ ասել է Հայաստանի նախագահը:

Սերժ Սարգսյանի հրամանագրով 2011 թվականի մրցանակ է շնորհվել նաև Հարություն Մարությանին՝ Հայոց ցեղասպանության հիշողության շարունակականության երևույթը, Մեծ եղեռնի և Ղարաբաղյան շարժման միջև եղած աղբյուրների ուսումնասիրությունը նոր գիտական մեթոդաբանության և մշակումների կիրառմամբ իրականացված հետազոտության համար:

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Ռ. Ջարյան - Մայրամուտից առաջ. Ինքնապատում, հ. 3:
2. Լ. Ղոնջյան - Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում:
3. Հ. Հարությունյան - Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ.:
4. «Հնագիտական պեղումները Հայաստանում», հ. 25 (Գ. Թումանյան, Ագարակ, պր. 1, Վաղբրոնգեղարյան բնակավայրը (2001-2008 թթ.):
5. «Հայ դրամատուրգները արվեստի մասին (անթուղզիա)», կազմող՝ Յա. Խաչիկյան:
6. Ա. Ղազարյան, Ե. Ղազարյան - Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում:
7. Շ. Դավթյան - Համո Սահյան. Հանրագիտարան:
8. Ջակոնո Լեոպարդի - Խոհեր:
9. «Հայ ճարտարապետները արվեստի մասին (անթուղզիա)», կազմող՝ Յա. Խաչիկյան:
10. Եսթեթիկայի հարցեր (հետազոտությունների ժողովածու), գիրք VI, կազմող՝ Յա. Խաչիկյան:
11. Հեղ. կոլեկտիվ - Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 1:
12. Йозеф Стржиговский – Архитектура армян и Европа, т. 1, книга первая.

1 Ա. Յովհաննիսյանը 1906 թ. սեպտեմբերին մեկնում է Գերմանիա, ընդունվում ենալի համալսարանի փիլիսոփայության բաժինը: Ուսումնառության տարիներին նա ունկնդրում է ժամանակի նշանավոր գիտնականներ Ռուդոլֆ էյկենին, Օտտո Լիբմանին, Էռնստ Յեկեելին և այլ հայտնի պրոֆեսորների: Նա գործուն մասնակցություն

խանում, որտեղ խմբագրում է «Կարմիր բանվոր» թերթը: Այնուհետև տեղափոխվում է Մոսկվա և 1918 թ. վերջերին աշխատանքի անցնում ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի Ֆայկական գործերի կոմիսարիատում՝ գլխավորելով գրական-հրատարակչական բաժինը: Մեկ տարի անց փոխադրվում է ՌՍՖՍՀ Լուսավորության

յանը, Ա. Կարինյանը, Մ. Մակինցյանը: «Նորք» հանդեսում են տպագրվել ժամանակի ոգուն հարազատ և պատմաքաղաքական նպատակամղվածությամբ տողորված նրա «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», «Յայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը», «Դաշնակցությունը և պատերազմը», «Դաշնակցական Յա-

ժոր» իշխանությունները նրան իրավունք են տալիս պայմանագրային հիմունքներով աշխատելու Գիտությունների ակադեմիայի պատմության և գրականության ինստիտուտներում (1943-1954 թթ.):

Ա. Յովհաննիսյանը հնարավորություն ստացավ իրեն լիովին նվիրել գիտությանը 1954 թվականից հետո միայն, երբ աշխատանքի անցավ ԳԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում, նախ որպես ավագ գիտական աշխատող, իսկ 1961 թվականից՝ նոր պատմության բաժնի վարիչ: 1955 թ. նա պաշտպանում է դոկտորական դիսերտացիա, իսկ 1960 թ. ընտրվում է ակադեմիկոս: 1961 թ. նրան շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում:

Բանտից ու աքսորից հետո ընկած ժամանակաշրջանը, անհատի պաշտամունքի դատապարտումը արարման բախտորոշ շրջափուլ հանդիսացան Ա. Յովհաննիսյանի կյանքում. առաջացած տարիքում նա ստեղծագործական նոր լիցք ստացավ: Ստալինյան բռնատիրության մղձավանջին հաջորդած ժամանակաշրջանում նա ջանաց կատարել Յայաստանի պատմության շրջադարձային հարցերի խոհափնտարական նոր ընդհանրացումներ: Յայացքը հառած միջին ու նոր դարերի հայ ազատագրական մտքի բեկումներին, ամուր գամված ազատասիրության գաղափարին, արմատները ձգած հայ մշակույթի շերտերի ընդերքը՝ Ա. Յովհաննիսյանը հայագիտության պահեստարանը հարստացրեց «Ֆրիկը պատմաբնական լույսի տակ», «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (երկհատոր), «Նալբանդյանը և նրա ժամանակը» (երկհատոր) աշխատություններով, հայագիտության առաջընթացին միտված տասնյակ հիմնահարցային և ուղեցույցային հոդվածներով:

Ա. Յովհաննիսյանի աշխատությունները իսկական գլուխգործոցներ են պատմաբնական ուսումնասիրությունների բնագավառում ոչ միայն իրենց մեթոդաբանության սկզբունքներով, այլև գիտահետազոտական մասշտաբներով, համապարփակ իրացումներով: Նա հետազոտական ընդգրկումների նոր չափանիշներով ընդլայնեց հարցասիրությունների շրջանակները: Յասարակական-քաղաքական համապարփակ կյանքի հանգուցակետերում դնելով Ֆրիկի, Իսրայել Օրու, Նալբանդյանի, հետագա հայ ազատագրական մտքի ու շարժման գործիչների անհատականությունները, նա գիտական համակարգի տակ դրեց ժամանակի բոլոր իրադարձությունները, հետադարձ ու առաջադարձ տարածումներով բացահայտեց բոլոր այն կապերը, որոնք XIX դարավերջը կապում-միացնում են անցյալի հետ և դիալեկտիկական միասնության մեջ ի հայտ բերում անցյալ, ներկա ու գալիք ժամանակների հայ հասարակական մտքի ու շարժման փոխկապակցված և կողմնորոշիչ օրինաչափությունները:

Ա. Յովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» ուսումնասիրությունը, որպես գիտահետազոտություն, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը համարում է հայ մատենագիտության պատմության եզակի երևույթներից մեկը, որի հեղինակը նոր բարձունքի վրա դրեց հայ տեսական-պատմագիտական միտքը և իր տեղը վավերացրեց հայագիտության դասականների շարքում:

Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը երիցս ծիշտ է: Ա. Յովհաննիսյանը հայագիտության դասականներից է, XX հարյուրամյակի հայ պատմագիտության ամենավառ դեմքը:

Նորայր ՍԱՐԻՆՅԱՆ
Պատմական գիտությունների
դոկտոր

Աշուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Գիտնականի կյանքն ու գործը


է ունենում ուսանողական միությունների աշխատանքներին, 1906 թ. վերջերից անդամակցում է ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպությանը:

Գերմանիայի համալսարաններում ընդունված կարգի համաձայն՝ Ա. Յովհաննիսյանը սովորում է ոչ թե մեկ, այլ մի քանի համալսարաններում: Ենայից հետո նա ուսումնառությունը շարունակում է Յալլեի համալսարանի տնտեսագիտության և Մյունխենի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետներում: Յայ պատմագիտության մեջ լուրջ խոսք ասելու իր անդամիկ հայտը Ա. Յովհաննիսյանը ներկայացնում է 1913 թվականին՝ Մյունխենում հրատարակելով «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» ուսումնասիրությունը, որը պաշտպանում է որպես դոկտորական ատենախոսություն և ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան:

Գերմանիայում ուսումնառությունն ավարտելուց հետո նա վերադառնում է հայրենիք և 1913-1914 թթ. աշխատում ծննդավայրի սեմինարիայում՝ որպես գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների ուսուցիչ: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի առաջարկությամբ նա 1914 թ. սեպտեմբերին տեղափոխվում է Վաղարշապատ և նշանակվում ճեմարանի քաղաքատնտեսության, լատիներենի, գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների դասախոս:

Ճեմարանի ուսումնասեր միջավայրը բարենպաստ էր նաև Ա. Յովհաննիսյան պատմաբանի գիտական հետաքրքրություններին նոր լիցք ներարկելու համար: Դասախոսություններից ազատ ժամերին նա աշխատում է Մայր Աթոռի հարուստ գրադարանում և ձեռագրապահոցում, ուսումնասիրում վավերագրերի և փաստաթղթերի եզակի հավաքածուները: Իր ուսումնասիրությունների արդյունքները նա տպագրում է «Արարատ» ամսագրի էջերում և առանձին գրքույկներում, որոնցում ներառվում էին գլխավորապես միջնադարի հայ ազատագրական պայքարի և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը: Նրա այդ հրապարակումները աչքի էին ընկնում ոչ միայն ասելիքի թարմությամբ, այլև ուղենշում հայ պատմագիտության առաջընթացի նոր ուղեգծեր:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Գևորգյան ճեմարանը դադարեցնում է իր գործունեությունը, սաներն ու ուսուցիչները ցրվում են: 1917 թ. վերջերին Ստ. Շահումյանի հրավերով նա տեղափոխվում է Բաքու, որտեղ գործուն մասնակցություն է ունենում քաղաքային խորհրդի, այնուհետև Բաքվի խորհրդային իշխանության (կոմունայի) աշխատանքներին: Նշանավոր հեղափոխական Նադեժդա Կոլեսնիկովայի հետ գլխավորում է Բաքվի խորհրդի ժողովրդական կրթության բաժինը: Միաժամանակ նա խմբագրում է «Բանվորի խոսք» թերթը: Բաքվի կոմունայի անկումից հետո: Ա. Յովհաննիսյանը որոշ ժամանակ հանգրվանում է Աստրա-



Ժողովրդական կոմիսարիատ՝ հայկական բաժնի վարիչի պաշտոնով:

Բորիս Լեգրանի գլխավորած ՌՍՖՍՀ դիվանագիտական միսիայի կազմում 1920 թ. օգոստոսին Ա. Յովհաննիսյանը ժամանում է Երևան, մասնակցում Յայաստանի Յանրապետության կառավարության հետ տարվող բանակցություններին, իր որոշակի նպաստը բերում երկրի խորհրդայնացման գործում: Յայաստանի խորհրդային կառավարության կազմում նա զբաղեցնում է Լուսավորության ժողովմիսարի պաշտոնը: Ա. Յովհաննիսյանն է ստորագրել անգրագիտությունը վերացնելու, պետական հրատարակչություն կազմակերպելու, կուլտուր-պատմական ինստիտուտի ստեղծման, Երևանի հեղափոխական թանգարանի հիմնադրման և այլ դեկրետներ: Նրա և Ալ. Մյասնիկյանի անմիջական ջանքերի շնորհիվ է, որ Խորհրդային Յայաստան են վերադառնում գիտության, մշակույթի, գրականության բազմաթիվ անվանի դեմքեր: Նրանք հոգատար են եղել գիտական մտքի առաջատար գործիչներին աշխատանքի տեղավորելու և անհրաժեշտ կենցաղային պայմաններ ապահովելու հարցում:

1922 թ. հունվարի վերջին տեղի ունեցած Յայաստանի կոմունիստական կուսակցության անդրանիկ համագումարում Ա. Յովհաննիսյանն ընտրվում է կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար՝ այդ պաշտոնը վարելով մինչև 1927 թ. օգոստոսը: Գրեթե վեց տարի զբաղեցնելով այդ կարևոր պաշտոնը՝ նա վիթխարի աշխատանք կատարեց հանրապետության կենսագործունեության բոլոր բնագավառներում (ժողովուրդական վերակառուցում, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, լուսավորություն և կրթություն, գիտություն, մշակույթ): Նա ստեղծել է խմբագրում էր «Նորք» հանդեսը, որի խմբագրականազմում էին եղ. Չարենցը, Աս. Մռավ-

յաստանի գործերից», «Դաշնակցության սոցիալական ծագումը», «Նժդեհի բացատրությունը Լեոնահայաստանի անկման պատճառների մասին» և այլ ուսումնասիրություններ: Դարձյալ հատկանշական է, որ լինելով կառավարող կուսակցության առաջին դեմք՝ նա իր խմբագրած պարբերականում հանդես եկող հեղինակներին չէր պարտադրում գաղափարական որևէ ստանդարտ, բանգի գիտեր, որ նրանք իրենց իդեալներում չէին խտրովում ժողովրդավարության դասական սկզբունքներից: Նրա էջերում տպագրվում էին Դավիթ Անանունն ու Լևոն Քալանթարը, Եղիշե Չարենցն ու Թադևոս Ավդալբեկյանը, Կոստան Չարյանն ու Դերենիկ Դեմիրճյանը, Երվանդ Շահազիզն ու Ստեփան Չորյանը, Ստեփան Լիսիցյանն ու Լեոն և ուրիշներ:

Յայաստանի կոմկուսի առաջին քարտուղարի պաշտոնում Ա. Յովհաննիսյանն աշխատում էր բոլորանվեր, սակայն աստիճանաբար հայտնի չափով զգում էր, որ կառավարման կուսակցական համակարգում սրընթաց աճում է վարչահրամայական մեթոդի գործելաձևը, որի բացահայտ թշնամին էր ինքը: Նման կացության պայմաններում նա որոշում է ընտրել հասունացող հակամարտության լուծման «խաղաղ» ճանապարհ: 1927 թ. օգոստոսին ազատվում է զբաղեցրած պաշտոնից և տեղափոխվում Լենինգրադ, որտեղ Մ. Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում մեկ տարի աշխատելուց հետո իրավիճակում է Մոսկվա, զբաղեցնում տարբեր պաշտոններ: Իսկ վերջում՝ 1935-1937 թթ. ԽՍՀՄ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ էր: Ասում ենք վերջում, քանզի 1937 թ. հուլիսին հեռացվում է աշխատանքից, անհիմն մեղադրանքով ձերբակալվում և բռնում բանտի ու աքսորի ճանապարհը:

Ա. Յովհաննիսյանը ձերբակալման պահին 50 տարեկան էր՝ առույգ ու խրոխտ, իր խոսքերով ասած՝ «տղամարդու արարման կյանքի կիզակետում»: Ժամանակի հայտնի բանաստեղծ, արվեստի տեսաբան և թարգմանիչ Օսիպ Մանդելշտամը, որն Ա. Յովհաննիսյանի ձերբակալման նախօրեին հանդիպում է ունեցել նրա հետ, իր հուշերում գրում է, որ նա բարձրահասակ, Պրոմեթևսի գլխով, վճիտ հայացքով, սլացիկ և հաստատուն կեցվածքով, ստեղծագործական և ֆիզիկական ուժերի ծաղկման մեջ գտնվող անձնավորություն էր (Մանդելշտամը և ս ձերբակալվում է 1937 թ. և բանտում մահանում 1938-ին):

Մոսկվայում և Երևանում խորհրդային բանտի «բարիքները» լիովին ճաշակելուց հետո՝ նրան աքսորում են Կոմի Ինքնավար Յանրապետությունում գտնվող Գուլագի ճամբարներից մեկը, իսկ այնտեղից էլ՝ Միջին Ասիա՝ Տաշքենդի մարզի Կանգիլուլ քաղաքը: 1943 թ. նա թույլտվություն է ստանում վերադառնալ Յայաստան, սակայն Երևանում չապրելու պարտադրանքով: Թույլատրելով ապրել Կիրովականում (Վանա-



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԳԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, աստղաֆիզիկոս Զաղիգ Մկրտիչ Մուրադյանը ծնվել է 1930թ. հուլիսի 10-ին Ռումինիայում՝ Բուխարեստ քաղաքում: Զաղիգ Մուրադյանի արմատները Արևմտյան Հայաստանի Սվազի նահանգի Փուրկ գյուղից են: Նրա պապը՝ Զաղիգ Մուրադյանը, Ռումինիա է եկել դեռևս 1890թ.:

Զաղիգը հաճախել է հայկական նախակրթարան, հետո՝ գերմանական դպրոց, որը հիմնվել էր դեռևս 19-րդ դարում և համարվում էր Ռումինիայի լավագույն դպրոցներից մեկը: Պատերազմի տարիներին, երբ խորհրդային զորքերը 1944թ. մտան Ռումինիա, այդ դպրոցը փակվեց: Զաղիգը ուսումը շարունակեց Բուխարեստի N 1 դպրոցում, որն էլ ավարտեց բարձր առաջադիմությամբ:

Հատկանշական է, որ Զաղիգ Մկրտիչ Մուրադյանի մասնագիտական ապագան կանխորոշվել է դեռևս հայկական դպրոցի 3-րդ դասարանում: Աշխարհագրության ուսուցիչը մի օր չէր եկել դասի, և այդ օրը դասը վարեց ավելի բարձր դասարաններում դասավանդող Լևոն Բալջյանը, ով երեխաներին հարցրեց. «Կու-



Նրա գլխավորությամբ 6 հետազոտող պաշտպանել են իրենց թեկնածուական աշխատանքները: Այսօր նա աշխատում է հետևում է աստղերի ու Արևի շարժին՝ Փարիզի Մեդոնի աստղադիտարանից՝ տիեզերական հետազոտությունների լաբորատորիայից:

1994թ.-ից մինչև այսօր Զաղիգ Մուրադյանը համագործակցում է Բյուրականի աստղադիտարանի հետ, 1997թ.-ից մինչ օրս Տիեզերական հետազոտությունների և աստղաֆիզիկայի սարքավորումների լաբորատորիայի հետ:

Անդամակցում է Միջազգային աստղագիտական միությանը, Եվրոպական աստղագիտական միությանը, Ֆրանսիական աստղագիտական միությանը, Ռումինիայի գիտության ակադեմիային, Հայկական աստղագիտական միությանը (ArAS, 2009):

Զաղիգ Մուրադյանն առաջին անգամ Հայաստան այցելեց 1989թ.՝ մասնակցելու IAU137 գիտաժողովին: Իսկ սկսած 1990-ականներից՝ համագործակցում է Բյուրականի աստղադիտարանի աշխատակից Արթուր Նիկողոսյանի հետ: Զաղիգ Մուրադյանը 1995-ին անկախ Հայաստանի՝ Բյուրականի աստղադիտարանում հայֆրանսիական առաջին գիտաժողովի կազմակերպիչներից էր, որը նվիրված էր աստղաֆիզիկայի տարաբնույթ խնդիրների:

Բացի գիտական գործունեությունից՝ երիտասարդ տարիներին նա Ֆրանսիայի հայ համայնքում ակտիվ հասարակական գործունեություն է ծավալել: Նրա ջանքերով 1980-ականների սկզբներին Ֆրանսիայում կազմակերպվել է հայ երաժիշտների համերգների մի շարք, որտեղ հանդես եկան Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ադամ Խուդոյանը, Էդուարդ Միրզոյանը: Անդամակցել է Ֆրանսիայում գործող հայ գիտնականների ասոցիացիային:

1974թ. նա ամուսնացել է Արդա Բասմաջյանի հետ, ունեցել երկու զավակ՝ Վան Տրդատը և Թալինը, որոնց հայրենի դաստիարակություն է տվել: Դուստրը՝ Թալինը, այսօր բավական ակտիվ գործում է Փարիզի հայկական բարեգործական միությունում:

Հաշվի առնելով Զաղիգ Մկրտիչ Մուրադյանի գիտական վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Զաղիգ Մկրտիչ Մուրադյանը այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում աստղաֆիզիկայի ոլորտի զարգացման գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի
գիտաբարտուղար

Զաղիգ Մկրտիչ Մուրադյան

զե՞ք այսօր աշխարհագրության դաս անցկացնե՞ք, թե հետաքրքիր պատմություններ պատմե՞ն աշխարհագրության հետ կապված»: Բնականաբար երեխաները ցանկացան լսել պատմությունը: Նա սկսեց պատմել ժյուլ Վեռնի «Երկրից դեպի լուսին» գրքի բովանդակությունը: Այս գիրքը արթնացրեց Զաղիգի հետաքրքրասիրությունը. նա սկսեց կարդալ այդ ոլորտի շատ նյութեր, այնուհետև՝ գրքեր և հասկացավ, որ իր սերը առիավետ կապված է տիեզերքի հետ:

Այդ երիտասարդ ուսուցիչը Լևոն Բալջյանը, ով ականային ազդեց Զաղիգ Մկրտիչ Մուրադյանի ապագա մասնագիտության ընտրության վրա, հետագայում ուրոշեց դառնալ վարդապետ: 1943 թ. սեպտեմբերի 30-ին նա Աթենքում ձեռնարկեց կուսակրոն քահանա, վարդապետ, ապա ընտրվեց Ռումինիայի հայոց թեմի հոգևոր առաջնորդ: Հետագայում Գևորգ 6-րդ կաթողիկոսը նրան հրավիրում է Էջմիածին: Իսկ 1955 թ. Լևոն Բալջյանը դառնում է Ամենայն Հայոց Վազգեն 1-ին կաթողիկոսը: Ամբողջ կյանքի ընթացքում Զաղիգ Մուրադյանի և իր ուսուցչի կապը շարունակվեց:

Դպրոցը ավարտելուց հետո հոր խորհրդով նա սովորում է արհեստ՝ արծաթագործություն, այնուհետև լուսանկարչություն:

Քանի որ աստղագիտությունը և ֆիզիկան իրար հետ կապված են, դպրոցից հետո Զաղիգ Մկրտիչ Մուրադյանը ընդունվեց Բուխարեստի ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետ, չորս տարի գերազանց սովորելուց հետո նա ընտրեց աստղաֆիզիկայի մասնաճյու-

ղը: Ավարտելուց հետո Զաղիգին՝ որպես լավագույն ուսանողի, առաջարկեցին մնալ աստղաֆիզիկայի բաժնում, որպես ասիստենտ: Բայց կար մեկ խնդիր. Զաղիգը համարվեց «սոցիալապես ոչ առողջ» ընտանիքից սերված՝ կապիտալիստ. քանի որ նրանք խանութ ունեին, և դրա համար նրան չտրվեց ասիստենտի հաստիքը:

Զաղիգը աշխատանք գտավ Բուխարեստի երկաթագործարանում՝ որպես ինժեներ, մեկ տարի անց այդ գործարանի լաբորատորիայի ղեկավարն էր:

1957թ. միջազգային գեոֆիզիկայի տարի էր, և աստղադիտարանում բացվեց 2 հաստիք, որից մեկը զբաղեցրեց Զաղիգը: Նա առավելապես ցանկանում էր մասնագիտանալ տիեզերագիտության ոլորտում, սակայն աստղադիտարանում թափուր տեղը արևային ֆիզիկայի բնագավառն էր: Մեկ տարի աշխատելուց հետո երիտասարդ Զաղիգը որոշեց իր գիտելիքները ավելի խորացնելու համար մեկնել Ֆրանսիա: 1959թ. նա աշխատանքի է անցնում Ֆրանսիայի աստղադիտարանի արևային ֆիզիկայի բաժնում՝ միաժամանակ լծվելով գիտական թեզի պատրաստման գործին:

1965թ. Սորբոնի համալսարանում հաջողությամբ պաշտպանեց գիտական ատենախոսությունը և դարձավ հետազոտող: Նա որոշ ժամանակ զբաղեցրել է Ֆրանսիայի աստղադիտարանի արևային ֆիզիկայի բաժնի վարիչի պաշտոնը, սակայն վարչական գործեր չսիրելու պատճառով շուտով դուրս է գալիս և մնում է որպես հետազոտող: Հինգ տարի դասավանդել է Բուխարեստի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում:

ՀՀ ԳԱՍ գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունն Արցախում

Մամլո հաղորդագրություն

Սևադա Հովհաննիսյանը միաձայն վերընտրվեց ՀՀ ԳԱՍ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում:

Սույն թվականի մայիսի 16-ին ՀՀ ԳԱՍ նախագահության նիստում ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ Սևադա Հովհաննիսյանը միաձայն վերընտրվեց ՀՀ ԳԱՍ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում:

Սևադա Հովհաննիսյանի հետազոտությունների բնագավառն է մաթեմատիկական երկրաֆիզիկան, երկրակեղևի խտության մոդելի կառուցումը, երկրաֆիզիկայի եռաչափ խնդիրների լուծման տեսությունը և մեթոդիկան: Նա 143 գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ մեկ մենագրության և երկու ուսումնական ձեռնարկի:

ՀՀ ԳԱՍ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Մայիսյան հաղթանակների օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը հպարտությամբ նշում էր եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 67-րդ, Շուշիի ազատագրման և պաշտպանության բանակի կազմավորման 20-ամյա տարելիցները, բնականաբար ՀՀ ԳԱՍ գիտակրթական միջազգային կենտրոնի սաներն անմասն չէին կարող մնալ համընդհանուր այս ոգևորությունից:

ՀՀ ԳԱՍ ԳԿՄԿ պատվիրակությունը՝ ի դեմս դասախոսների և մագիստրոսների, եռատնի օրերն անցկացրին Արցախում: Մեր պատվիրակության այցը նաև գործնական բնույթ էր կրում: Այդ օրերին նրանք հանդիպեցին Արցախի ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանին և Աժ նախագահ Աշոտ Դուլյանին, քննարկեցին կրթության համակարգում կատարվող բարեփոխումների հետ կապված հարցեր, մշակեցին հետագա համագործակցության մշակեցին հետագա համագործակցության հարցեր, որի շրջանակներում ՀՀ ԳԱՍ ԳԿՄԿ համապատասխան որակավորում ունեցող ուսանողները կկարողա-



նան գործուղվել Արցախ, ընդունվել աշխատանքի և ապահովել այնտեղ առկա ուրակյալ մասնագետների պահանջարկը: Աժ նախագահ Աշոտ Դուլյանը հանդիպման ժամանակ խոսեց Արցախի պայքարի դժվար տարիների մասին, երբ հայի հզոր ոգին, հավերժ ապրելու իրավունքը փոխանցվել էին նոր սերնդին՝ որպես առասպել, որպես գիտակցված մահ, որ-

պես արյուն և հավատ: Իսկ արդեն մայիսի 9-ին ՀՀ ԳԱՍ ԳԿՄԿ ուսանողներն ու դասախոսները Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ականատես եղան բանակի փառավոր ու հաղթական զորահանդեսին, ապա շրջեցին պատմական Արցախի գեղատեսիլ վայրերով և վերադարձան Երևան:

Ազնիվ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

➤ 1 ղանակներն ու սկզբունքները՝ սակայն քսանմեկերորդ դարի գիտության բարձունքից՝ զինված ոչ միայն նորագույն մեթոդներով, այլև ահռելի ծավալի հասնող համեմատական աղբյուրներով, որոնք կարող են ավելի վաղ լուսավորել և նախկին մութ տիրույթում անգամ տեսանելի դարձնել Հայոց պատմությունը:

Գիտաժողովի քննադատները շատ բազմազան էին. Հայկյանների պատմությունը հին և միջնադարյան մերձավորարևելյան գրավոր և բանահյուսական սկզբնաղբյուրների հենքի վրա, Հայկյանները և Հայաստանի պատմական աշխարհագրությունը, Հայոց լեզուն և նրա հնչյունային առանձնահատկությունները՝ համաձայն խորհրդային թողած տերմինների, Հայկազունների պատմական՝ իրական հիմքը, խորհրդային և Սեբեոսի ներկայացրած Հայկազունները և մեր օրերի հնա-

պարզապես նյութի բացակայության արդյունք է եղել, սակայն հենց Պատմահոր տվյալները ցույց են տալիս, որ, օրինակ, Տիգրանակերտ քաղաքի հիմնադիր Տիգրան Մեծը ժողովրդի կողմից սիրված և խորհրդանշանաբար ընդունված Հայկազուններից է, թեև կառավարել է «Արշակ Մեծի եղբայր Վաղարշակից» տարիներ անց:

Թե ինչ է տեղի ունեցել Վանի թագավորության (համաձայն խորհրդային, բայց որոշ վերապահումներով՝ Այրարատյան թագավորության) հետ, մի ուրիշ խնդիր է. գիտնականները վիճում են, թե արդյոք Վանի թագավորությունը – Ուրարտուն կործանվել է, թե՞ վերափոխվել էր վանդալների Հայաստանի, ե՞րբ է սա սկսել տեղի ունենալ, յոթերորդ դարում, թե՞ ավելի ուշ՝ վեցերորդում՝ Քրիստոսից առաջ:

Գիտնականների խոշորացույցի տակ զննված հայ-

մյուս նահապետներին, ինչպես գիտաժողովում հիշվեց, դարձել է հայոց հին օրացույցի առաջին օրը, իսկ նրա զարմերի անուններով են կոչվել Հայոց ամիսները: Հայկի հետ առնչվող Նոր տարին՝ Նավասարդը, արքայական որսարշավի, վարժանքների, զանազան մրցույթների, այդ թվում նաև ծիսարարական մի համահայկական համալիր էր, յուրահատուկ համահայաստանյան «խաղերի» ասպարեզ:

Այն, որ Հայկազունների ցանկը նաև խորհրդային փորձն էր օբյեկտիվորեն հիմնավորելու երկնքում իր գերիշխող տեղը զբաղեցնող Հայկ-Օրիոնի երկրային նախորդի՝ Հայկի և նրա սերունդների հնագույն արմատները պատմական Հայաստանի հողի վրա, բորբոքել են նաև գենետիկ-մարդաբանության մասնագետների: Միջազգային, այդ թվում եվրոպական, թուրքական, հայ և կովկասյան գիտնականների համատեղ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի բնակչությունը իր գենետիկական շտեմարանում պահում է տվյալներ, որոնք հասնում են մինչև Քարի դար:

Այս արագ ակնարկը Հայկազուններին նվիրված միջազգային գիտաժողովի մասին ցույց է տալիս, որ այն նախևառաջ ունի մեծ գիտական նշանակություն: Կարելի է կռահել, որ վերը բերված վարկածների կամ հաստատուն հայտարարված եզրակացությունների միայն մի մասն է առայժմ արժանի դառնալու տեսություն, ամբողջովի որպես ստուգված և հավաստի տվյալ հայ ժողովրդի պատմամշակութային անցյալի մասին: Մյուսները մասամբ դոփում են տեղում կամ մոլորության մեջ են, իսկ որոշ վարկածների արամիտ և հետաքրքիր կրահումները սպասելու են այն ժամանակներին, երբ դրանք հնարավոր կլինի ստուգել՝ արդարացնել կամ հերքել:

Համաշխարհային գիտությունը միշտ և այժմ առաջ է սլանում, և այս գիտաժողովը ցույց է տալիս, թե ինչ կաներ այսօր խորհրդային, եթե մեր կողքին լինեք և հնարավորություն ունենար օգտվելու հազարամյակներ առաջ՝ իր ժամանակների համար անմատչելի եղած գիտական տվյալներից՝ ընձեռած պատմագիտական, բանասիրական և բնական գիտությունների կողմից: Սա նաև ցույց է տալիս, որ հարկավոր է խոսել համաշխարհային գիտության տերմիններով, չափանիշներով և բոլորին հասկանալի նոր լեզվով, դուրս գալ նեղ ազգային, մասամբ դրական, մասամբ էլ կաշկանդող շրջանակներից, նայել հարևանների գիտական նվաճումներին իրենց և մեր մասին, օգտվել դրանցից ու համագործակցել ազգերի հետ, ինչպես դա արել են մեր նախնիները բոլոր ժամանակներում:

Խորհրդային պատմության մեջ չկա որևէ զրպարտանք մյուս ցեղերի և ժողովուրդների նկատմամբ, նրանք գնահատված են իրենց դիրքով, գործերով ու արժանիքներով: Հայկազուններին և օտարներին, դասեր քաղելով խորհրդային, միշտ պետք է գնահատել հավասարակշռված, օբյեկտիվ դիրքերից, գերծմալով անհիմն իդեալականացումից: Խորհրդային և նրա պատմական «երկվորյակ»՝ Սեբեոսը, սքալի և որոշակի պատկերացում են ունեցել հայ պետականության անցած ուղու, անկախության հասնելու պատմական հանգույցների, հարևանների ու բուն ժողովրդի մասին:

Հայկազուններին նվիրված միջազգային համաժողովը նախանշեց գիտության անելիքները, որոնք ահռելի են ծավալով, բազմազան՝ բնագավառներով և իրականանալի են միայն բարի կամքի և գիտնականների համագործակցության շնորհիվ. դրանք որևէ հաստատության կամ անձի մենաշնորհը չեն: Դրանք ոչ միայն գիտության մշակների, անհատների, այլև պետական մարմինների գործը պետք է լինեն: Որովհետև ազնիվ և ուժեղ քաղաքացիներ կարելի է ունենալ միայն նրանց դրական լիցքեր հաղորդելու, կենսականորեն անհրաժեշտ գործունեության ոլորտներ բացելու, պատմական օրինակներով ուժ և ազնվություն ներարկելու միջոցով, իսկ դրա համար հարկավոր են բարոյական, նյութական, դրամական ներդրումներ:

Այս կարևոր գիտական և հայանպաստ միջոցառումը, որը Հայկազունների մասին առաջինն է, սակայն ոչ վերջինը, անհնարին կլինեք առանց գիտության նվիրակնականներին, գիտության արդյունքներով հետաքրքրվող բոլոր մարդկանց և գիտությանը սատարող անշահախնդիր մշակներին: Նրանց առաջապահը այս գիտաժողովը կազմակերպելու համար լուրջ ներդրումներ կատարած, սակայն համեստորեն ստվերում կանգնած մեկենաս էղվարդ Մսերյանն է՝ իր համախոհների փոքր, բայց համերաշխ ջոկատի հետ միասին, որոնք չնոռացան, որ Մովսես խորհրդային վաղ միջնադարում իր Պատմությունը կերտեց ամուր և հուսալի հովանավորության շնորհիվ:

Հայկ ՅԱԿՈՒՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր



միջազգային գիտաժողով
ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐ
առասողել և դասնություն

գիտությունը, հավատալիքները, ֆետիշն ու տոտեմը, նահապետները խորհրդային գործում: Ավելին, Հայկյանները մղել են նաև դեպի գենետիկական բնույթի ուսումնասիրությունները և աստղաֆիզիկայի ոլորտները:

Հուզող հարցերից մեկը այն էր, թե Հայկազունները կամ Հայկյանները բնիկ Հայոց գերդաստա՞ն են, թե՞ եկել են դրսից, որտե՞ղ է գտնվել թորգոմի տունը, և ե՞րբ է այն սկզբնավորվել՝ եթե կարողանաք միմյանց համադրել հնագիտության տվյալները և պատմությունը: Ինչպե՞ս մեկնաբանել «Հայկ» և «հայ» անունները, բանի որ ծագումով հայերեն յուրաքանչյուր հասկացություն պետք է ունենա իր նշանակությունը կամ գոնե փոխառված արմատի մեկնությունը:

Խորհրդային տվյալների շնորհիվ, ինչպես պարզվում է, կարելի է հարցադրել և մասամբ լուծել հայ հնագույն պետական միավորումների ձևավորման կենտրոնների տեղայնացման, առաջացման ժամանակի, քաղաքական ու տնտեսական, մշակութային դրոշմապատճառների համալիրը: Հայկական լեռնաշխարհի զարգացման ներքին հզոր լծակների վրա իրենց ազդեցություն են ունեցել ինչպես հարևան քաղաքակրթությունները, այնպես էլ հարատև ելևէջների ենթարկվող բնական պայմանները: Ընդ որում, յուրաքանչյուր ճգնաժամից հետո Հայկական լեռնաշխարհի պետականությունները ավելի ուժեղացել են՝ միավորվելով վերջիվերջո հայ ժողովրդի և միասնական պետականության ներքո:

Պարզվում է՝ Հայկազունների հիսունհինգ սերունդ ներկայացնող ցուցակում հրաշքով փրկվել են իրենց անուններով Միտանի թագավորության մի քանի թագավորներին զգալի չափով համահունչ անուններ. սակայն նրանց հաջորդականությունը մասամբ խախտված է, իսկ Հայկյանների ցանկում ներդրվելու պատճառները դեռևս կարող են լրացուցիչ հետազոտման:

Գիտաժողովում հնչած հարցերից մեկը խեթական գրավոր աղբյուրներում պահպանված՝ Փոքր Ասիայի բնիկներից խաթերի/կամ նախախեթերի/ լեզվի և մշակույթի հուշարձաններին էր նվիրված, ովքե՞ր են խաթերը, ո՞րն է եղել նրանց պատմական առաքելությունը, ի՞նչ կապեր կարելի է շոշափել Հայկական լեռնաշխարհի և Վաղ ու Միջին բրոնզի դարերի Փոքր Ասիայի միջև:

Հայկյանների հետ սերտորեն առնչվեց Հայաստանի կամ ավելի ընդարձակ՝ Հայասա-Ազգիի խնդիրը:

Կարևորվեց Հայկազունների և այս ցուցակից դուրս մնացած, այսինքն՝ օտար կամ հրավիրված «Արշակունի» արքաների, նաև Հայկազուն ծագումով նախարարների և մյուս քնը կազմած օտարածին նախարարական տների հարցը: Մի կողմից, այս բաժանումը պայմանական է, և խորհրդային իսկ գնահատականով՝ «Արշակունիները» թեև օտար, սակայն ոչ պակաս օրինական և սիրելի մարդիկ են տվել Հայոց երկրին: Մյուս կողմից էլ՝ արքաների մի մեծ խմբի տված օտարի պիտակը

կական հին երկրամասերից մեկը Հարքն էր: Այն դիտարկվեց առասպելաբանական և պատմագիտական առումներով (երկուսն էլ համաձայն խորհրդային ընձեռած տվյալների), ինչպես նաև հնագիտության, մշակութային լանդշաֆտի մասին գիտության տվյալների ներքո: Արդյունքում ենթադրվեց, որ եթե Բարձր Հայքը դարեր շարունակ եղել է Հայաստանի հոգևոր կենտրոնը, ապա Ծոփքը և Պարսկահայքը միացնող հողերը եղել են առևտրական կամուրջը, Այրարատը՝ երկրի քաղաքական առանցքը, իսկ Տուրուբերանը՝ մասնավորապես Հարքը, այսպես կոչված հոգևոր թիկունքը, «նախնական Հայաստանը»:

Նույն այս Տուրուբերանում առաջարկվեց տեղադրել Հայասա երկիրը, իսկ գեկուցումներից մեկում Տուրու և բեր/բիր արմատներից երկուսն էլ առաջարկվեց մեկնաբանել խեթա-ուրարտական բարբառների շնորհիվ, թարգմանելով Տուրուբերանը որպես Տարու (Տորք) աստծու տուն կամ տաճար:

Խորհրդային Հայկազուններից երկուսի՝ Հայկ և հապետին հաջորդած Արամանյակի և Արամայիսի անունների բնության հիման վրա գիտաժողովում առաջարկվեց Արամանյակին նույնացնել Արևի, իսկ Արամայիսին՝ Լուսնի հետ, իսկ համապատասխանաբար նրանց նվիրված տաճարները՝ խորհրդային հիշատակած Արեգի (Տիրին նվիրված պատգամախոսարան-օրակույով հանդերձ) և Լուսնի տաճարների հետ. ընդ որում, այս երկու արական ծագումով Հայկազունների տաճարներից երկրորդը՝ նվիրված արական Լուսնի աստծուն, հետագայում վերափոխվել է Անահիտ-Ափրոդիտի կամ իզական կերպարանքով Լուսնին նվիրված տաճարի:

Մյուս առասպելաբանական-լեզվաբանական տվյալների համադրությունը թույլ տվեց գիտաժողովում առաջարկել Հայաստանի լեռներում և մասնավորապես Սևանի ավազանում գտնվող ձկնանման վիթխարի կոթողները դիտել որպես ձկնա-մարդ՝ «ջրորդու» պաշտամունքին նվիրված կոթող, իսկ Միսակին համարել ինչպես Գեղամի որդի (համաձայն խորհրդային), այնպես էլ Սևանա լճի ծնունդ (համաձայն համաձայնական առասպելաբանության և լեզվաբանության):

Գերթական անգամ վերանայման ենթարկվեց Հայկ և հապետի կերպարը: Հայագիտության մեջ վաղուց արտահայտված և ընդունված գաղափարին, որ Հայկը առասպելական կերպար է, հայ ժողովրդի խտացումը, նրա իղծերի և հզոր մշակութային և քաղաքական հիմքերի մարմնավորումը, օտար նվաճողների դեմ պայքարի և ազատության դրոշի խորհրդանիշը, հակադրվեց մի այլ, ոչ նոր վարկած: Վերջինիս համաձայն՝ թե՛ Հայկը և թե՛ Բելը պատմական իրական դեմքեր են: Առաջարկվեց Բելի նախատիպ համարել Ք.ա. 1244թ. իշխած Թուրուքի-Նինուրթա I ասորեստանյան արքային, որը, պատմական Հայաստանի տարածք մտնելով, ելել էր Նախրյան 43 երկրների միացյալ զորքի դեմ: Հայկի կերպարը իր նշանակությամբ գերիշխելով

ՍՓՅՈՒՌԱԸԱՇԱՅ ԱՐԿԵՍՏԱԳԵՏՆԵՐ

(Սկզբը՝ նախորդ համարում)

Ստեղծվեց Արփիար Վարդյան-Խաչիկ Սանդալյան կոմիկական գույզը, երբ նրանցից մեկն իր լուրջ և ծանրակշիռ կերպարանքով լրացնում և ընդգծում էր մյուսի զավեշտական գծերը, աջակցելով մյուս դերակատարներին՝ ազատ ու անկաշկանդ խաղ ներկայացնելու:

«Ամուսիններուն բարեկամները» (համանուն ֆիլմի երկխոսությունները գրի է առել և տեղայնացրել Սանուկ Թաշճյանը, 1928) կատակերգության նյութն ինքնին թելադրում էր դերասանական նման հակադրությունից բխող բեմադրական լուծումներ: Բժիշկ Աբգարովի երիտասարդ ու գեղեցիկ կնոջը՝ Մավլինային (Ռ. Յովհաննիսյան) հետապնդում են նրա իսկ բարեկամները. փաստաբան Երվանդը, տարեց մի պրոֆեսոր (Գրիգոր Բագրատունի) և դպրոցական ընկեր Լևոնը

հիշատակին տրվող ներկայացումների շարքը հիանալի առիթ էր նրա մտահղացումներն իրականացնելու համար: Մյուս առաջատար բեմադրիչներին համանման, Ա. Վարդյանը նույնպես դիմեց Օտյան-Կյուրճյանի հայտնի՝ «Ֆրանքո-թրքական պատերազմ կամ Չարշըլը Արթին աղա» կատակերգությանը: Այս անգամ շեշտելով պիեսի իսկ հիմքում ընկած հակասությունը՝ պատերազմող կողմերից մեկուն հետադիմական՝ ալաթուրքա հայացքների տեր Արթին աղան է, իսկ մյուսուն՝ նրա կինը՝ Եվփիմեն (Ռ. Յովհաննիսյան), իր ալաֆրանկա կեցվածքով, Վարդյանը, նաև իբրև գլխավոր դերակատար, ստեղծեց նախորդներին չզիջող կոմիկական մի նոր բեմադրություն, ապացուցելով, որ նա «որչափ եվրոպական նույնքան ալ հայկական և մասնավորաբար ալաթուրքա տիպեր ստեղծելու մեջ



Արփիար Վարդյանը Դատավոր Լիվերտիի և Դատապարտյալ Լիվերտիի դերերում «Ամուսնության գիշերը», 1930 թ.

րաններում խեղդվող դստերը՝ Դեզդեմոնա-Գոհարին (Ռ. Յովհաննիսյան): Շեքսպիրյան տեսարանն անմիջապես վերածվում է մի զավեշտի, հանդիսատեսի լարվածությունը՝ փոխվում ծիծաղի, իսկ դերասանական խմբի տնօրեն Վրույրն (Վ. Դաքեայան), իր հերթին, ներկայացումը փրկելու փոխարեն, դարձնում է ավելի անհեթեթ:

1940-ականների վերջերից, Արփիար Վարդյանը հյուրախաղային շրջագայությամբ եղավ Հայ սփյուռքի տարբեր կենտրոններում. Դամասկոս, Ամման, Հալեպ, Ստամբուլ և այլուր, տեղի դերասանական ուժերով բեմադրելով Արշակ Պենկլյանի խաղացանկից վերցված կատակերգություններ:

1955-1956 թվականներին, երբ Բեյրութի հայ համայնքում հասունանում էր բավական հեռանկարային թատերական մի շարժում, Արփիար Վարդյանի ներկայացումներն առանձնացան իբրև երևույթ հյուրախաղային մյուս խմբերի ելույթների կողքին: «Ժողովուրդը խուժած է ժամանակեն առաջ: Գրում է «Քուլիսի» թղթակիցը («Շաբաթ մը հորը տունը, շաբաթ մը մորը տունը», «Սեն ժոզեֆ» թատերասրահ): Ար. Վարդյան ապահոված է լայն ժողովրդականություն: Անհամբերությամբ հառաջ եկած ծափահարությանց տակ վարագույրը կբացվի քիչ մը ուշ: Վարդյանի գործը առաջին իսկ վայրկյանն կազդե ներկայաներուն վրա, անոնք անդադրում, կուշտ ու կուռ կխնդան: Հեղինակը, ծիծաղ ու խնդուք խլելու մասնագետ մըն է կարծես: (...) Բեյրութ այցելող դերասաններու մեջ, ամենաշատ սիրվածներն են հանդիսացավ Պ. Վարդյան թե՛ իր գործով, թե՛ իր դերով: Ամսագիրն իր հոդվածն ավարտում է հետևյալ տողերով. «Ահավասիկ հայ բեմի առաջյալ մը, անձնագրի և նվիրյալ, որ հայ բեմին ի սեր կըրջի ամենուրեք հայության մեկ առ մեկ պահելու համար թատրոնի սերը:

Այսպիսով, Արփիար Վարդյանը, եզրափակելով մեկ այլ նշանավոր թատերական և գրական գործիչի՝ Գասառ Իփեյանից (1883-1952) և նրան միացած Լևոն Շանթից (1869-1951) հետո, նպաստեց նաև 1950-1970-ականներին Հայ սփյուռքում ազգակենտրոն դիրք ունեցող Բեյրութի հայ համայնքի թատերական արվեստի կայացմանը:

1960-ականներին, Ա. Վարդյանը հաստատվեց Մոնրեալում (Կանադա)՝ իր ավանդ ունենալով տեղի հայ թատրոնի զարգացման գործին: Այստեղ էլ, 1975-ին, ամբողջ համայնքը մեծ շուքով նշեց նրա ստեղծագործական ուղու 50-ամյակը: Արժանի գնահատականը արտիստական ևս մեկ կյանքի, անմնացորդ նվիրված հայ բեմին:

Անահիտ ԳՅՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

ԱՐՓԻԱՐ ՎԱՐԴՅԱՆ. ԿԱՏԱԿԵՐԳԱԿ ԴԵՐԱՍԱՆՆ ՈՒ ԲԵՄԱԴՐԻԻՉԸ

(Վահան Դաքեայան): Սանդալյանի բժիշկ Աբգարովը, որն իր կեցվածքով «ավելի դրամատիկ էր քան զավեշտական, գրոտեսկի աստիճան տպավորիչ դարձրեց փաստաբան Երվանդ-Վարդյանի շինծու վախճան ու սարսափը, որն, անտեսելով ամուսնու սպառնալիքները, շարունակում էր դարպասել նրա կնոջը:

Նույն սկզբունքով Վարդյանի Ջիմի Սկոտի կողքին հայտնվեց Սանդալյանի դրամատիկականին հարող Ուիլյամ Հարիսոնը («Պեպեքս», 1929), իսկ արդեն ծանոթ կատակասեր ու շարժում Վալիին հակադրվեց նրա ծանրաբարո և պատկառելի Սուլթան բեկը («Արշին մալ ալան», 1929): Սանդալյանն, այսպիսով, «լիովին կամբողջացներ Արփիարը, ամոր ծիծաղաշարժության քով ցուցաբերելով լրջությունը, հուզումները, զայրույթը, մեկ խոսքով դրաման»:

Ուշագրավ է, որ Ա. Վարդյանը փորձեց նույն արդյունքի հասնել անգամ մենակ՝ կատարելով դատավոր Լիվերտիի և դատապարտյալ Լիվերտիի հակոտնյա դերերը՝ «Ամուսնության գիշերը» կատակերգության մեջ (եզրափակելով պետական թատրոնի խաղացանկից, թարգմ. Վ. Բերբերյան, 1930):

Չգտելով հանդիսատեսի ուշադրությունը բեռնել միայն իր հերոսներին, Վարդյանը դիմեց ավելի հոգեմտո՝ պոլսահայ իրականությունը պատկերող գործերին: 1928-1929 թթ. երվանդ Օտյանի

վարպետ է:

Իրոք, միայն հաջողված կերպարը կարող էր արթնացնել Արթին աղայի առաջին դերակատարի՝ Լևոն Շիշմանյանի (?-1936) անսպասելի վրդովմունքը, որը համոզված էր, որ եթե Օտյանն այս կատակերգությունը գրել էր իր համար, ապա իրեն էր վերապահվում նաև Արթին աղայի դերը խաղալու մենաշնորհը: Սկսվեց մի իսկական ստեղծագործական մրցակցություն, իսկ դերասանների հակամարտությունը, խորանալով նրանց քաղաքական հայացքներով, իր արտացոլումը գտավ նաև մամուլում: Արդյունքում, ի թիվս այլ հրապարակումների, «Սավառնակ» երգիծաթերթում հայտնվեց «Կուսակցական պայքարը և թատրոնը» հոդվածը, որտեղ, մասնավորապես, նշվում է. «Շիշմանյանը կհավակներ հայտարարել աջ ու ձախ, թե «Չարշըլը»-ն կպատկաներ միայն իրեն և թե արդեն շինված էր իրեն համար: (...) Պայքար կուսակցությանց մեջ, պայքար դերասաններուն մեջ»,- ավարտում է թերթը:

Վարդյանի ներկայացման այս ընկալումն, իրականում, անտեսում էր երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի կատակերգության բեմադրության բուն դրդապատճառները: Բխելով նրա արտիստական նախասիրություններից, սա նաև մի նոր քայլ էր՝ խմբի խաղացանկն ազգայնացնելու ուղղությամբ: Նույն 1928 թվականին, Արփիար Վարդյանն արդեն իսկ

բեմադրել էր Գրեմ Աինոնի «Դայի Կարապետ կամ ամերիկահայ փեսացուն» կատակերգությունը, գլխավոր՝ Դայի Կարապետի դերակատարման համար ծանաչվելով որպես իր ուսուցիչ՝ Սերովբե Պենկլյանի արժանի հետևորդը՝ «հաջորդ մը Պենկլյանի, եթե շարունակե իր ներկա բժախնդրությունը հանդեպ բեմին և իր ստանձնած դերերուն»: Նա, իրոք, նույնպիսի բժախնդրությամբ շարունակելով բեմադրել հայ իրականությունը ներկայացնող թատերախաղեր, մեկ տարի անց՝ 1929-ի ապրիլին, Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբարից» հետո, սեպտեմբերին բեմադրեց իսաչիկ Սանդալյանի «Դերասան փեսացուն» կատակերգությունը: Արևմտահայ հեղինակների հայտնի թատերախաղերին համանման մի գործ, որն, արդեն, ոչ միայն Վարդյան-ճեթիսորի, այլև դերասանի ակնհայտ հետևողականության վկայությունն էր:

Պիեսը բեմադրվեց ֆրանսիական վոդևիլի ոճով, երբ առաջադիմական և հետամնաց կողմերի պայքարն ավելի էր սրվում դերասանական խաղի՝ Վարդյան-Սանդալյան գույզի հակադրության շնորհիվ՝ վերջինիս հնարավորություն ընծառելով ցուցադրել արդեն իր ողբերգակի, այն էլ՝ Օթելլոյի դերակատարի հատկանիշները: Թատրոնում առաջին անգամ հայտնված Ջենոթ աղան (Ա. Վարդյան) շտապում է բեմ փրկելու իր ապագա փեսայի՝ Օթելլո-Լևոնի (Խ. Սանդալյան) մի-

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Պատմաբանասիրական հանդես»-ի 2012-ի 1-ին համարը

Մեր գրասեղանին է «Պատմաբանասիրական հանդես»-ի այս տարվա անդրանիկ համարը: Առաջ անցնելով խոստովանելիք՝ հանդեսը բովանդակալից է, նյութերը բազմազան են, հետաքրքիր և ժամանակահունչ: Եվ մեր սույն հրապարակումը միոված է ձեր ուշադրությունը հրավիրելու առավել ուշագրավ նյութերի և հաղորդումների վրա:

«Մեծն Արտաշեսը Առաջին Հայոց պատմության էջերում» (հեղինակ՝ Ժորես Խաչատրյան) հոդվածով է բացվում հանդեսը: Ինչպես հեղինակն է նշում՝ «Արտաշեսյան արքայատան հիմնադիր Արտաշես Առաջինը Հայաստանի քաղաքական ու ռազմական ամենախոշոր գործիչն է, որը, սակայն, պատմագիտության մեջ չի ստացել իր արժանի գնահատականը: Արտաշես արքայի օրոք ձևավորվել է պատմական Մեծ Հայքը Հայկական լեռնաշխարհում:

Ժորես Խաչատրյանն իր հոդվածում փորձում է արժևորել, բնութագրել Մեծն Արտաշեսին, որը ստեղծեց հզոր և միասնական Հայաստան, որն ընդգրկում էր Հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետը, Ատրպատականից մինչև Ծոփք և Փոքր Հայկ ընկած տարածքները:

Պետք է լավատեսյակ լինել հայ արքաների վարքին: Ժորես Խաչատրյանը փորձել է լրացնել այդ բացը Մեծն Արտաշեսի մասին:

Եկող տարի լրանում է հայ միջնադարյան վերածնության խոշորագույն դեմքերից մեկի՝ Մխիթար Գոշի

մահվան 800-ամյակը: Մխիթար Գոշի փիլիսոփայական, իրավագիտական սխրանքին է նվիրված Գրիգոր Թանայանի «Մխիթար Գոշի իրավունքի փիլիսոփայությունը» գիտական հետազոտությունը, որը, ինչպես նշում է հեղինակը, գրված է «Մեծ մտածողի վաստակը երախտագիտորեն գնահատելու և մեծարելու ակնկալիքով»: Անտարակույս, հեղինակը հասել է իր նպատակին:

Անահիտ Հակոբյանի «Խաչատուր Աբովյանի առնչությունները Հայաստան այցելած եվրոպական գիտնականների հետ (1843-1848 թթ.)» հրապարակման գլխավոր խնդիրը եղել է «XIX դ. և նրա նախորդած ժամանակաշրջանի հենքի վրա լուսաբանել Հայաստան այցելած եվրոպական մտավորականների գիտական առնչությունները Խաչատուր Աբովյանի հետ, ինչպես նաև ներկայացնել հայ մեծ լուսավորչի անձի ու գործի արժևորումը եվրոպական գիտության կողմից, որոնց քննությունը կարևոր նշանակություն ունի արվարձանագիտության համար»:

Գրականագետ Ալբերտ Մուշեղյանը «Ազաթանգեղոսի պատմությունը» ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը» գիտական հետազոտություն-բանավեժ է Գրիգոր Լուսավորչի անձի, նրա սրբացմանն ու պաշտամունքին հայ պատմագիտության մեջ: Հեղինակը համաձայն չէ իշխող այն կարծիքի հետ, որ Գրիգոր Լուսավորչի անձը մինչև

460-ական թվականները թաղված է եղել մթության մեջ: Ալբերտ Մուշեղյանը գիտականորեն և սկզբնաղբյուրների վկայությամբ ապացուցում է, որ «Լուսավորչի պաշտամունքը ստեղծվել էր արդեն IV դարի ընթացքում՝ այդ Կաթողիկոսական Տան իշխանության ժամանակ և իր բարձրակետին հասավ V դ. սկզբին՝ հայ դպրության սկզբնավորման շրջանում, և Գրիգորն իր վսեմ կերպարանքով փայլատակեց ոչ թե 460-ական թվերին, այլ հենց V դ. առաջին քառորդում»:

Խորհուրդ կտայինք անպայման կարդալ պատմաբանասիրական գիտական այս չափազանց ուշագրավ հետազոտությունը:

«Պատմաբանասիրական հանդեսը»-ը ներկայացնելիս մենք հաճախ ենք կրկնում հետաքրքիր է, բազմազան, ուշագրավ, բովանդակալից արտահայտությունները: Խոստովանենք, որ գովեստի այս բնութագրումները քաղաքավարության տուրք չեն, այլ հանդեսի և նրանում գետեղված նյութերի, հրապարակումների ծննդավայր գնահատական: Այնպես որ՝ կարդացեք հանդեսի նյութերը, և դրանց զգալի մասը անպայման կհետաքրքրեն և դուր կգան ձեզ: Ըստ որում՝ նաև նորություններ կմատուցեն ձեզ գրականության, գրականագիտության, հնագիտության բանասիրության, պատմության և հայագիտության ամենատարբեր ոլորտներից: Հանդեսում, ինչպես միշտ, հարուստ են «Գրախոսությունները» և «Հրեյլանները» բաժինները:

Ուրեմն, մեր խորհուրդը՝ անպայման կարդացեք, որովհետև մենք խնդիր չենք ունեցել ամբողջությամբ անդրադառնալ հանդեսում տեղ գտած հրապարակումներին և, անկեղծ ասած, դրա հնարավորությունն էլ չունենք:

Առակների օրինակով մարդկանց սխալներից գերծ պահելու միջոցը հազարամյակների պատմություն ունի: Այն ուժի մեջ է նաև մեր օրերում: Սակայն որքանով է արդյունավետ այդ միջոցը, անգամ այն դպրոցական դասագրքերում, առակների ժողովածուներում գետեղելու, անգիր անել տալու պրակտիկայում, հարցը մնում է բաց: Ո՞վ չի հիշում, երբ անտառն են հատում ծառերն ասում են՝ կացնի կոթը մեզանից է:

Քրիստոնեության ռիսկերի միջոցով մահմեդականությունը, որ բռնի, կոտորածների, սպանությունների տանջալից բռնադատների միջոցով քրիստոնյաներին իսլամ կրոնն է ընդունել տվել, հիմա խաղաղ, առանց սրի ու զոհերի, նվաճում է Եվրոպան, Եվրասիան՝ Ռուսաստանը...

դարձել են մզկիթներ, իսկ մյուսները պայթեցվել են: Ու՞ր են Ալբանիայի եկեղեցիները: Համատարած մզկիթներ են այնտեղ հիմա: Ու՞ր է Սերբա-խորվաթիայի քրիստոնեության մայրաքաղաքը, այն իսլամի կենտրոն է հիմա:

Խոսքը պիտի տանք վիճակագրությանը, որովհետև այդ ազատություն և հավասարություն կոչվածից միայն մի կողմն է օգտվում, մյուսը՝ ոչ: Ամբողջ Եվրոպայում վերջին տարիներին մոտ 300 մզկիթ է կառուցվել, իսկ մահմեդական երկրներում գոնե մեկ եկեղեցի կառուցվել է: Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի պառլամենտներում հայտնվել են մահմեդական պատգամավորներ, լրիվ կամ խառը ամուսնություններից ծնվածներ:

խառը բազմաթիվ ամուսնություններով կազմում են Դաշնության բնակչության կեսը, իսկ մյուս կողմից էլ նկատվում է ուղղափառությունից անցում դեպի իսլամը: Նա գրում է. «Այս անցումը կարող է զանգվածային բնույթ կրել, որը հղի է արմատական հասարակական-քաղաքական փոփոխություններով: Սա կնշանակի ոչ միայն Ռուսիայի վերջը, այլև անհետացումը հենց ռուս ազգի, որը շատ բանով ուղղափառության արդյունքն էր հանդիսանում»:

Նրա ունեցած վիճակագրական տվյալներով Ռուսաստանի իսլամական պետություն դառնալու ընթացքը կավարտվի մինչև 2050 թ., գուցե և ավելի շուտ «որովհետև համարյա ուզածդ ռուսի մայրը, հայրը, տատը, պապը թաթարից է»:

Կազմում աշխարհի ամենամեծ մզկիթը կառուցվեց, և իհարկե՝ ոչ միայն թաթար հավատացյալների միջոցներով: Ֆիրդուսը ենթադրում է, որ պայքարը ռուսների դեմ Չեչնիայից անցել է Հյուսիսային Կովկասի մյուս հանրապետությունները և չի ուշանա հայտնվելու Մերձվոլգյան և Ուրալյան երկրներում: Նրա կարծիքով, անցումը դեպի իսլամ չի լինի կանաչ, նարնջագույն կամ սպիտակ, որովհետև հավատի կերպ ընդունած պայքարը և երդվյալ իսլամիստներին չեն կանգնեցնի ոչ ռետինե մահակները, ոչ արցունքաբեր գազերը և ոչ զնդակները: Մուսուլման եղբայրներից թաթարներին օգնող պետությունների մեջ Թուրքիայի ֆինանսական և կրոնական աջակցությունը հեռահար նպատակներ է հետապնդում: Թուրքալեզու ժողովուրդներին մեկ պետության մեջ ընդգրկելու պան-թուրքական կամ ավելի հեռուն գնացող՝ պանթուրանական պետության երազանքը միշտ էլ մնում է անթեղված, սակայն սպասում է հարմար առիթի:

Այդ երազանքի իրականացման հարմար առիթը ընդունում էր Առաջին համաշխարհային պատերազմը, որին խանգարող հայ ժողովուրդը ոչնչացվեց, սակայն դեպի Կովկաս, դեպի Թաթարստան անցնելու ծրագրերը խափանվեցին հենց մուսուլման եղբայրների՝ դադստանցիների և մյուս կովկասյան զորքերի կողմից: Երկրորդ համաշխարհային պատերազմը պանթուրանիզմի երազանքը ի կատար ածելու լավ առիթ էր խոստանում, եթե ֆաշիստները հաղթանակեին:

Թուրքական 50 հազարանոց բանակը կենտրոնացած էր վրացա-հայկական սահմանի մոտ՝ պատրաստ ներխուժելու Անդրկովկաս, եթե ֆաշիստները գրավեին Ստալինգրադը: Թուրքիան ենթադրում էր Անդրկովկասի բռնազավթումից հետո մուսուլման եղբայրներով բնակեցված Հյուսիսային Կովկասի և ապա կալմիկների, բաշկիրների և թաթարների նվաճումը, որը ողջագործություններով պիտի ավարտվեր:

Սակայն Ստալինգրադը չընկավ, և Թուրանը մնաց կարոտաբաղձ երգերում: Ահա եկել է երրորդ առիթը: Հզորացած մուսուլմանական հանրապետությունները ոտքի են լինելու՝ թոթափելու 400-ամյա ռուսական լուծը: Խիստ աշխուժացել են թաթարա-թուրքական մշակութային կապերը: Թաթար, բաշկիր, կալմիկ երիտասարդները ուսումնառության համար Թուրքիայի համալսարաններն են մեկնում: Վերադառնում են հակառուսական գաղափարներով տոգորված: Եթե նախկինում Թուրքիան էր փորձում դեպի Կովկաս և մերձուրալյան շրջանները բարձրանալ, այժմ այդ շրջանների ազգակիցներն են իր ոտքը գալիս: Առավել ևս՝ եթե Ռուսաստանի Դաշնության իսլամացումը իրականություն դառնա, ինչպես Ֆիրդուսը է ենթադրում, ապա դա կդառնա Թուրանի լայնածավալ համաթուրքական պետության իրականացման սկիզբը:

Ներսես ՄԿՐՏՉՅԱՆ
Բանասիրության դոկտոր

Քրիստոնյա աշխարհի կրանումը իսլամի կողմից



Ինչպե՞ս են Եվրոպացիք մոռացել իրենց աղոթքները, երբ խնդրում էին Բարձրալիքն.

- Փրկի՛ր մեզ, Աստված, ասուպներից, երկրաշարժից, թուրքերից...

Երկրաշարժերն ու ասուպները բնական աղետներ էին, բայց թուրքերը՝ ռեալ վտանգ, որ Եվրոպայի դռներն էին ծեծում, սարսափի մատնելով քրիստոնյա աշխարհը՝ հասնելով մինչև Վիեննա:

Իզուր չէր այն թևավոր խոսքը. «Այստեղով թուրքերն են անցել», որ մեծ ռոմանտիկը՝ Վիկտոր Հյուգոն, խարանեց նրանց պատմության մեջ:

Ինչպե՞ս պատահեց, որ Եվրոպան իր կրօնում տեղ տվեց իր հավատքի ռիսկերի միջոցով՝ իսլամի հետևորդներին, որի դրոշի վրա գրված է. «Գլավուրի ունեցվածքը, կինը, աղջիկը բոնն են»... Դուրանի այս պատվիրանը փոխվե՞լ է:


Որովհետև Եվրոպան մոռացավ իսլամի հասցրած արյունոտ բաղնիքները:

Եվրոպա, դու հռչակեցիր ազատություն, հավասարություն՝ ազգերի, կրոնների միջև, հավատքների՝ համոզումների ազատություն: Նրանք էլ եկան իրենց մզկիթներով, մինարեթներով, ազաններով ու մուեզիններով և բնավորվեցին Եվրոպայի սրտում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, Իսպանիայում, Իտալիայում, Ռուսաստանում: Կարո՞ղ էիր չթողնել մզկիթ կառուցել, չէ՞ որ ազատություն ու հավասարություն էիր հռչակել: Հավասարություն և ազատություն, բայց ո՞ւմ համար: Կարո՞ղ է այդ հավասարությունից օգտվել քրիստոնյան մահմեդական երկրում, կառուցել իր եկեղեցին: Բնավ երբե՞ք:

Ընդհակառակը, մահմեդական Թուրքիայում եղած եկեղեցիներն են քանդում կամ մզկիթների վերածում, որը սկսվեց հունական Այա Սոֆիայից: Ու՞ր են հայկական 3.000 եկեղեցիներն ու վանքերը: Լավագույնները

(Ճանոթություն: խառը ամուսնությունից ծնվածը միշտ մահմեդական է գրվում):

Վերջերս «Ռեզոնանս» պարբերականը իրապարակեց կազանցի Դևեբաշ Ֆիրդուսու (փիլիսոփա և գրող) հետաքրքիր մի հոդվածը՝ «Մուսուլմանական ապավենը դարձավ պետություն պետության մեջ» վերնագրով: Մահմեդականության ապագայի նկատմամբ շատ հավակնոտ, բայց փաստերով հիմնավորված այդ հոդվածը ահագանգ է հնչեցնում Ռուսաստանի տխուր ապագայի մասին: Ինչպիսի գիշումների գնաց Ռուսաստանի Դաշնությունը անկախության ձգտող մահմեդական ժողովուրդներին ինքնավարություն տալով, հզորացրեց նրանց կրոնական ապարեզում՝ դարձնելով նրանց ակտիվ մարտնչողներ որոնք ստանում են նաև դրսի մահմեդական եղբայրների ֆինանսական օգնությունը (Պակիստան, Թուրքիա, Արաբիա), բացում են իրենց միջին և բարձր կրոնական դպրոցները, հիվանդանոցները, խանութները, դեղատները, վարսավիրանոցները և բիզնեսի օբյեկտները՝ դառնալով՝ ինչպես հեղինակն է ասում, «պետություն պետության մեջ»: Մուսուլման եղբայրների ֆինանսական օգնությանը գումարվում է նաև Ռուսաստանի Դաշնության շռայլ ֆինանսավորումը: Ուֆայում ՌԴ նախագահ Մեդվեդևն ասաց՝ «Կենտրոնական կառավարությունը իմամներ պատրաստելու համար մեկ միլիարդ ռուբլի է տրամադրել»: Դևբաշ Ֆիրդուսը խոսում է վիճակագրական փաստերով, որոնք տխուր, բայց ռեալ իրողություն են: Մահմեդականները ոչ միայն բազմազավակ են և արագ են բազմանում, այլև



թե Ռուսաստանի Դաշնության իսլամացումը իրականություն դառնա, ինչպես Ֆիրդուսը է ենթադրում, ապա դա կդառնա Թուրանի լայնածավալ համաթուրքական պետության իրականացման սկիզբը:

Երկրի կենսաառեստության 40 տարում կրճատվել են 1/3-ով

Երկրագնդի կենսաբանական ռեսուրսները 1970-2008 թթ. կրճատվել են 28 տոկոսով: Դա նշվում է «Կենդանի մոլորակ» նոր զեկուցագրում, որը 2 տարին մեկ կազմում են Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի մասնագետները: Այս հետևությունն արվել է կաթնասունների, ձկների, թռչունների, սողունների և երկկենցաղների ավելի քան 9 հազար խմբերի զարգաց-

ման ուսումնասիրության հիման վրա: Փորձագետները արձանագրում են, որ 1966 թվականի համեմատությամբ բնապաշարների սպառումը կրկնապատկվել է: Համաշխարհային էկոհամակարգի գլխավոր օգտագործողը և աղտոտողը ԱՄՆ-ն է: «Եթե ամբողջ աշխարհը բնապաշարներն օգտագործվեր այնչափ, որչափ այսօր օգտագործում են ամերիկացիները, ապա էկոհաշրջանի

պահպանման համար կպահանջվեր երկրի նման հինգ մոլորակ», -նշվում է զեկուցագրում: Սակայն աշխարհի բնապաշարները մեկ շնչի հաշվով վատնող երկրների ցանկում ԱՄՆ-ը զբաղեցնում է 5-րդ տեղը: Առաջատարներն են Բաթարը, Քուվեյթը, ԱՄԷ-ն և Դանիան: ԱՄՆ-ին հաջորդում են Բելգիան, Ավստրալիան, Կանադան, Հոլանդիան և Իռլանդիան: Այդ ցանկում Ռուսաստանը 33-րդ

տեղում է, - նշում է ԻՏՍՈՒ-ՏՍՍՍ-ը: Ցանկը կազմելիս հաշվի են առնվել այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են մթնոլորտում ածխածնի երկօքսիդի արտանետումների մակարդակը, անտառների և օգտագործվող հողահանդակների ընդհանուր մակերեսները, արդյունաբերական թափոնների ծավալները և այլն: Հիմնադրամի գլխավոր տնօրեն Ջիմ Լիպի կարծիքով, նոր զեկուցագիրը անմիջականորեն հասցեագրված է հունիսի վերջերին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ՄԱԿ-ի կոնֆերանսի մասնակիցներին: Այն նվիրված կլինի մոլորակի կայուն զարգացման հարցերին:

Եվս մեկ անդրադարձ կատարենք ՀՀ գյուղատնտեսության նախարարության վերաբերմունքին գյուղատնտեսական արտադրանքների արդյունավետության բարձրացմանը խոչընդոտելու առնչությամբ:

Մենք վերջին երկու տարիներին գյուղատնտեսության բնագավառի վերաբերյալ երկու առաջարկություն ենք ուղարկել ՀՀ կառավարությանը: Առաջինը (2011թ.) վերաբերում էր բնական ցեղիտների կիրառությանը հողագործության մեջ, որտեղ բնական ցեղիտները պահպանելով խոնավություն, միևնույն ժամանակ հողից կլանում են ծանր մետաղների, թունահարույց տարրերի և ռադիոակտիվ իզոտոպների զգալի մասը (շատ ցեղիտները շատ են կլանում, քիչը՝ քիչ) արգելակելով դրանց անցումը բույսի մեջ, հետևապես և մարդկանց օրգանիզմ: Այս առաջարկության վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար պարոն Մակարյանի պատասխանի առնչությամբ մենք քննադատական հոդված ենք տպագրել «Գիտություն» թերթում (N 7-8, 2011թ.) և, որքան էլ չցանկացանք դրան անդրադառնալ նորից, չստացվեց (դրան ստիպեց մեկ այլ փոխնախարարի՝ պարոն Ա.Պողոսյանի տված պատասխանը մեր երկրորդ՝ 3 ապրիլի 2012թ. առաջարկությանը):

Նշենք, որ այս երկրորդ առաջարկությունը նորոյթ չէ, այն կատարվել է սրանից 39-40 տարի առաջ, նախկին ԽՍՀՄ-ի օրոք, և այն այժմ ավելի շատ հիշեցում է, քան առաջարկություն, բայց, քանի որ չի ներդրվել ոչ նախկին ԽՍՀՄ-ի և ոչ էլ այս անկախ հանրապետության օրոք, ստիպված ենք եղել նորից գրել (հիշեցում կատարել) այդ մասին: Ստորև բերում ենք ՀՀ կառավարության ուղարկված «հիշեցում-առաջարկություն» ամբողջությամբ, որպեսզի ընթերցողին հասկանալի դառնա դրա բովանդակությունը և դրա հետ էլ կապված մեր վրդովմունքի էությունը: Ահա այն.

Գիտությունը առաջարկում է,


ՀՀ գյուղնախարարությունը՝ անպրետում

Բնական ցեղիտների կիրառության հարցում ՀՀ գյուղնախարարության վարքագծի մասին

«Բնական ցեղիտների կիրառման հիմնախնդիրները»

Հարկ է նշել, որ Հայաստանում դեռևս 1972թ. հայտնաբերվել է բնական ցեղիտների (Նոյեմբերյանի շրջան) խոշորագույն հանքավայր, որի Նոր Կողբի տեղամասում, մի փոքրիկ տարածքում, կատարվել է մանրազնին հետախուզական աշխատանք և գնահատվել է բնական ցեղիտների 13,8 մլն տ պաշար: Մինչ հանքավայրում մանրազնին հետախուզական աշխատանքների սկիզբը, կատարվող նախնական փուլի հետազոտություններով պարզվել է, որ Նոյեմբերյանի ցեղիտները պիտանի են.

1. կատալիզատորներ և դրանց կրողներ պատրաստելու համար,
2. որպես ադորբենտներ նավթամթերքների մաքրման համար,
3. ցեզիումի, ռութիլիումի, լիթիումի, կալիումի և մի քանի ծանր մետաղների ընտրովի տարանջատման համար,
4. որպես հողի կառուցվածքը բարելավող և բերքատվությունը բարձրացնող նյութ, որը միևնույն ժամանակ հողից կլանում է ռադիոակտիվ ստրոնցիում և ցեզիումը՝ ինչպես նաև մի շարք ծանր մետաղների գերակշիռ մասը, արգելակելով դրանց թափանցումը բույսի մեջ, հետևապես և մարդու օրգանիզմ,
5. կարբամիդային խտանյութի (անասնակերի) պատրաստման համար,
6. որպես արսորբենտ բնական այրվող գազերի չորացման համար,
7. արդյունաբերություններից հեռացող գազերից թթու տարրերը (SO₂, SO₃, CO₂ և այլն) որսալու համար,
8. սինթետիկ մաքրող նյութեր պատրաստելու համար,
9. այլ տիպի (ավելի կարևոր և արժեքավոր) ցեղիտներ՝ ֆոսֆատ, շաբաֆտ, նատրիումական մորդենիտ և այլն, սինթեզելու համար,
10. հոսքաջրերի մաքրման և խմելու համար պիտանի դարձնելու համար,



նի դարձնելու համար, 11. ատոմական էլեկտրակայաններից հեռացող ջրերից ռադիոակտիվ թափոնները որսալու համար և այլն: Բնական ցեղիտները (հատկապես) կլինոպտիլոլիտ հանքանյութը իրենց յուրահատուկ կառուցվածքի և դրա հետ էլ կապված կլանող և մաքրող ունակությունների շնորհիվ շատ շուտով մեծ ճանաչում են գտնում երկիր մոլորակի մի քանի տասնյակ երկրների կողմից, որոնք էլ վաղուց ի վեր (անցյալ դարի 60-70-ականներից) կիրառում են այդ ցեղիտներն ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ: Հայաստանն այս գործում բավականին հետ է մնում չնայած նրան, որ 1982 և 1983 թվականներին Հայկական ԽՍՀ նախարարների խորհուրդը երկու որոշումներով (18

փետրվարի 1982թ., N 97 և 14 սեպտեմբերի 1983թ. N 548) ուրվագծել է բնական ցեղիտների կիրառության հիմնական ուղղությունները Հայաստանում կիրառելու համար և պարտավորեցրել է համապատասխան նախարարություններին հետախուզել և ներդնել բնական ցեղիտները արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ:

1983 թվականի N 548 որոշումով Հայաստանում բնական ցեղիտների կիրառության հիմնական ուղղություններն են ճանաչվել.

1. բնական ցեղիտների կիրառությունը որպես հավելում խոշոր եղջերավոր կենդանիների, խոզերի և թռչունների կերաբաժնում,
2. բնական ցեղիտների կիրառությունը հոսքաջրերի մաքրման համար և, երևանի աերացիայի կայանի նստվածքների մշակման՝ արհեստական հողաշերտ ստեղծելու գործում որպես կատիոնատ,
3. բնական ցեղիտների հումքային հենքի վրա դրանց սինթետիկ նմանակների ստեղծում, ցեղիտների ներդրումը սինթետիկ լվացող նյութերի ստացման, գազերի, հեղուկների և յուղերի մաքրման և չորացման գործում, ինչպես նաև մոլեկուլյար մաղերի լայն տեսականու ստացման փորձարարական արտադրության կազմակերպում կատալիզատորների և լցանյութերի համար: Ինչպես տեսնում ենք, Հայկական ԽՍՀ նախարարների խորհուրդը բնական ցեղիտների կիրառության առաջին պլանի վրա էր դրել դրանց կիրառությունը որպես հավելում անասնակերի մեջ:

Նոյեմբերյանի հանքավայրում բնական ցեղիտները ներկայացված են հանքանյութային տարատեսակ կազմերով՝ անալցիմով, մորդենիտով և կլինոպտիլոլիտով, որոնցից արդյունաբերական նշանակություն ունեն վերջին երկուսը: Ցեղիտները ներկայացված են շերտային մարմիններով, որոնք հերթափոխվում են կրաքարերի և բենթոնիտային կավերի շերտերով: Վերջիններս էլ ներկայացված են ինչպես անջատ, համարյա միահանքանյութային շերտերով, այնպես էլ ցեղիտների (կլինոպտիլոլիտի) հետ խառը՝ միևնույն շերտի տարածքում և ցեղիտների հետ ունեն տարբեր քանակային հարաբերություն՝ 10-ից մինչև 90%:

Հայտնի է, որ անասնակերին, որպես հավելում, Հայաստանի (Նոյեմբերյանի) հանքավայրի բնական ցեղիտներն առաջին անգամ փորձարկվել են ՌԴ Մոսկվայի հազվագյուտ տարրերի հանքաբանության, բյուրեղաքիմիայի և երկրաքիմիայի գիտահետազոտական ինստիտուտում 1972-1973 թվականներին, իսկ հետո՝ ինչպես միահանքանյութային ցեղիտային, այնպես էլ խառը ցեղիտ-բենթոնիտային տարատեսակները ՌԴ Վորոնեժ քաղաքում փորձարկվել են կարբամիդային խտանյութեր (անասնակեր) պատրաստելու գործում: Նշենք, որ բոլոր փորձարկումներն էլ տվել են միանգամայն դրական արդյունքներ:


Խոճկորների համար նախատեսված սպիտակուցային կերին սովորաբար ավելացվում է 10% չգերազանցող ցեղիտ (կլինոպտիլոլիտ), որը զգալիորեն նպաստում է կենդանիների քաշի աճին: Հայտնի են դեպքեր, երբ անասնակերին 5% քանակությամբ կլինոպտիլոլիտ ավելացնելիս 11 շաբաթվա ընթացքում փորձակենդանիների քաշը ստուգվող խմբի համեմատ աճել է 16%-ով: Համեմատելով ՀՀ Նոյեմբերյանի, Ադրբեջանի Այ-Ղաղի և Թուրքմենիայի Բաղիսի հանքավայրերի կլինոպտիլոլիտի խթանիչ ազդեցությունը խոզերի աճի վրա, պարզվել է, որ անասնակերին մինչև 5% կլինոպտիլոլիտ ավելացնելիս փորձակենդանիների քաշն աճում է հետևյալ քանակներով.

- Նոյեմբերյանի հանքավայրի կլինոպտիլոլիտ ավելացնելիս՝ 20-23%,

- Այ-Ղաղի և Բաղիսի հանքավայրերի՝ 9-16%:

Նոյեմբերյանի հանքավայրի ցեղիտները (Նոր Կողբի տեղամասի) փորձարկվել են նաև խոշոր եղջերավոր կենդանիների վրա: Հայաստանի Աբովյանի շրջանի «Աբովյան» տնտեսությունում կատարված փորձերով հաստատվել է, որ կթու կովերի օրաբաժնում կլինոպտիլոլիտի օգտագործումը (յուրաքանչյուր գլխի համար օրը 90գ) նպաստում է կաթնատվության բարձրացմանը 6,6-8,7 տոկոսով: Բացի այդ, անասնակերին կլինոպտիլոլիտի հավելումը կենդանիներին ազատում է (բուժում է) բորից, ժանտախտից և այլ հիվանդություններից, որոնք հաճախ խիստ անհանգստացնում են մատղաշին, հատ-

կապես մորից կտրվելու առաջին շրջանում: Մենք արդեն իսկ նշել ենք, որ լավագույն արդյունք ստացվում է անասնակերին 5 տոկոսի չափով ցեղիտ հավելելիս, սակայն «Աբովյան» տնտեսությունում, մեզ համար անհասկանալի պատճառներով, ցեղիտի քանակը խոշոր եղջերավոր կենդանիների կերաբաժնում կազմել է յուրաքանչյուր գլխի համար ընդամենը 90 գ, որը



լավագույն չափաքանակից՝ 5 տոկոսից, փոքր է մի քանի անգամ: Համոզված ենք, որ լավագույն չափաքանակով ցեղիտ հավելելիս կովերի կաթնատվությունը կարող էր աճել ոչ թե 6,6-8,8 տոկոսի չափով, այլ առնվազն 15-18 տոկոսի չափով:

Դրա լավագույն ապացույցն են հետազայում երզողվետ ինստիտուտի կողմից կատարված հետազոտությունները.

Երզողվետ ինստիտուտի գիտնականների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքով պարզվել է, որ կթու կովերի կերաբաժնում օրական կերի 5 տոկոսի չափով Նոյեմբերյանի բնական ցեղիտ հավելելու պարագայում միջին կաթնատվությունն աճում է 12,5 տոկոսով:


Խոշոր եղջերավոր կենդանիներին ցեղիտային հավելում (կերի 5% չափով) պարունակող կերով կերակրելիս կենդանիների քաշի աճը կազմել է 16-20 տոկոս: Նշենք, որ նախկին ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններում կատարված հետազոտություններով հաստատվել է, որ բնական ցեղիտները անասնապահության և թռչնաբուծության մեջ կիրառելիս (հավերին, ճտերին, խոզերին և խոշոր եղջերավոր կենդանիներին ցեղիտով պատրաստված կերով կերակրելիս) ստացվում է զգալի տնտեսական արդյունքը կազմել է.

- ճտերի աճեցման համար 623 դոլար,
- ձվատու հավերին կերակրելիս՝ 15901 դոլար,
- խոշոր եղջերավոր կենդանիներին կերակրելիս՝ 705 դոլար,
- խոզերին կերակրելիս՝ 459 դոլար:

Մինչ բնական ցեղիտների արդյունաբերական նշանակության հանքավայրերի հայտնաբերումը, անասնապահության գործում կիրառվում էին բարձրորակ բենթոնիտային կավեր, որոնք հազվադեպ հանդիպող և խիստ կարևոր հումք են արդյունաբերության զանազան ճյուղերի համար: Բնական ցեղիտներն ու ցեղիտ-բենթոնիտային տարատեսակներն ամբողջությամբ փոխարինում են բարձրորակ ալկալային տիպի, բենթոնիտներին և տալիս են ավելի բարձր տնտեսական արդյունք:

(Շարունակելի)
Հրաչյա ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր

ԵՐԿՐԻՆ ՄՊԱՌՆՈՒՄ ԵՆ 5 ՀԱԶԱՐ ԵՐԿՆԱՔԱՐԵՐ



Եթե Տունգուսյան մետերոիտը (երկնաքարը) իր ժամանակին ուշանար ևս 4 ժամ, ապա Սանկտ-Պետերբուրգը կջնջվեր երկրի երեսից:

Աստղագետները երկնաքարերին (մետերոիտներին) անվանում են տիեզերական մարդասպաններ: Այդ քարեղեն և մետաղյա օբյեկտներից տուժել են Արեգակնային համակարգի գրեթե բոլոր մոլորակները: Երկիր մոլորակին առաջին հարվածը հասել է 65 միլիոն տարի առաջ. երկիր մոլորակի վրա ընկած երկնային հյուրը պատճառ դարձավ երկրի վաղնջական «բնակիչների» դիմադրությունը, ոչնչացմանը: Այսօր էլ մետերոիտները (երկնաքարերը) մարդկության համար զարհուրելի սպառնալիք են: Ամեն տարի մեր մոլորակի մթնոլորտ է մխրձվում մի քանի մետր տրամագծով մեկ անկոչ հյուր: Բայց, բարեբախտաբար, այն երկիր չհասած, այրվում է: Մինչդեռ դրանցից ավելի մեծ երկնաքարերը կարող են դառնալ անասելի աղետի պատճառ:

Տիեզերական ինֆրակարմիր WISEk աստղադիտակի շնորհիվ ՆԱՍԱ-ի գիտնականները այսօր կարողացել են ճշգրիտ հաշվել տիեզերական «մարդասպաններին» թիվը: Պարզվում է, որ երկրի մերձակայքում թռչում են մոտ 5 հազար վտանգ սպառնացող երկնաքարեր: Դրանց տրամագիծը 100 մետրից ավելի է: Համեմա-

տության համար նշենք, որ Տունգուսյան մետերոիտը ուներ 30 մետր տրամագիծ: Մասնագետների հաշվարկով, եթե երկնային այդ հյուրը իր ժամանակին ուշանար 4 ժամով, ապա այդ մետերոիտը կկոչվեր ոչ թե Տունգուսյան, այլ Սանկտ-պետերբուրգյան, և քաղաքը կջնջվեր երկրի երեսից:

- Տարբեր մեծության երկնաքարերը, որոնք ընդունակ են ընկնել մեր մոլորակի վրա, հասնում են 47 հազարի. վախեցնում է ՆԱՍԱ-ի մերձերկրային օբյեկտների ուսումնասիրման ծրագրի տնօրեն Լինդլի Ջոնսոնը: Սա երկու անգամ ավելի է, քան մենք կարծում էինք մինչև հիմա: Ըստ որում, այսօրվա դրությամբ հայտնաբերված է դրանց մեկ երրորդը: Բացի այդ, մեզ սպառնացող օբյեկտները ունեն ուղեծրի ցածր թեքություն, որն էլ ավելացնում է դրանց երկրի հետ բախվելու հնարավորությունը:

Իսկ եթե այդ երկնաքարերից մեկն այսօր կամ վաղը ընկնի երկրի վրա, ապա ո՞ր: Այս հարցին պատասխանելու համար Մաուրիցիոսի համալսարանի մասնագետները դիմեցին հատուկ ծրագրի օգնությանը, ուր հավաքված են տվյալներ սույն երկնաքարերի մասին: Եվ կազմեցին «սև ցուցակը» այն երկրների, որոնք գտնվում են «տիեզերական մարդասպանների» նշա-

նառության տակ: Հնարավոր «գոհերի» ցուցակում գիտնականները ընդգրկել են Չինաստանը, Ինդոնեզիան, Հնդկաստանը, Ճապոնիան, Միացյալ Նահանգները, Ֆիլիպինները, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Բրազիլիան և Նիգերիան:

ՀԱՐՑԸ ԴՐՎԱԾ Է ԿՏՐՈՒԿ

Հարցը դրվում է շատ որոշակի՝ ի՞նչ է երկրին սպառնում մոտ ժամանակներս:

- Մենք տագնապով ենք հետևում Ապոֆիս երկնաքարի վարքին, որի տրամագիծը 200 մետր է, խոստովանեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի աստղագիտության ինստիտուտի աստղային համակարգերի ֆիզիկայի բաժնի վարիչ, պրոֆեսոր Օլեգ Մարկովը:

- Երկնաքարը երկրին կմոտենա 2029 թվականին: Այն կանցնի բավականաչափ մոտիկ՝ 36 հազար կիլոմետր հեռավորության վրա: Այդ բարձրության վրա են հեռուստատեսային արբանյակները: 2036 թվականին Ապոֆիսը կրկին կվերադառնա: Այդ ժամանակ Ապոֆիսը կբախվի՞ արդյոք երկիր մոլորակի հետ, մենք կարող ենք իմանալ միայն ու միայն 2029 թվականին: Այդ ժամանակ մենք երկնաքարի վրա կտեղադրենք հաղորդիչ և կսկսենք հետևել նրա ուղեծրի փոփոխություններին:

Սվետլանա ԿՈՒՉԻՆԱ
«Կ. Պ».

ԱՅԼԱԶԱՆ

Աղավնիները հափուկ նշանակության գորքերում

Չինաստանի պաշտպանության նախարարությունը կամաց-կամաց և գաղտնի հզորացնում է իր ռազմական հզորությունը՝ ավանդական և նորագույն միջոցներով:

«Թայմ» ամսագիրը հաղորդում է աղավնիների մասին, որոնց վարժանքը, առանց ավելորդ աղմուկի՝ հաջողությամբ իրականացվում է զինվորական դիվիզիաներից մեկում:

Հրատարակության տեղեկացմամբ այստեղ միանգամից վարժեցվում է 10 հազար թևավորներ, որոնք կարող են թռչել ժամում 120 կիլոմետր արագությամբ: Ըստ որում, միաժամանակ կարող են տանել 100 գրամ «օգտակար բեռ»: Ամերիկացիները լրջորեն տազնապած են. հայտնի է դարձել որ չինացիները «խաղաղության աղավնիներին» մտադիր են օգտագործել դժվարամատչելի շրջաններում հատուկ նշանակության գործողությունների համար:

Իրադրության կոմիզը նրանում է, որ «աղավնիների գորախմբի» կորիզը կկազմեն այն աղավնիների սերունդները, որոնք 1937 թվականին Չինաստան է բերել ԱՄՆ ռազմաօդային ուժերի «Թռչող վագրեր» էսկադրիլիայի հրամանատար, լեյտենանտ Կլեր Լի Շեննոլտը: Ի դեպ, աղավնիները մի անգամ չէ, որ հրաշալի են իրենց դրսևորել ռազմական տարբեր գործողություններում: Օրինակ, 1944 թվականին՝ դաշնակիցների Նորմանդիայում ափհանման ժամանակ:

Աշխարհի հեռուստադեպարտման ամենաբարձր աշտարակը

Տոկիոյում այցելուների համար շուտով կբացվի դիտման հարթակը, որը տեղադրված է Tokyo Skytree հեռուստաաշտարակի վրա: Ինչպես գրում է «Կիոզոն», այն համարվում է աշխարհի ամենաբարձր աշտարակը:

Ավելակվում է, որ գործարկման առաջին օրը հեռուստաաշտարակ կայցելի 200 հազար մարդ: Աշտարակի կառուցումն ավարտվել է 2012 թվականի փետրվարի 29-ին:

Աշտարակի կառուցումը իրականացվել է 3,5 տարում: Կառույցի բարձրությունը 634 մետր է: Այցելուների դիտման հարթակները գտնվում են 350 և 450 մետր բարձրությունների վրա: Ըստ կանխատեսումների առաջին մեկ տարում աշտարակի այցելուների թիվը կկազմի 32 միլիոն մարդ: Ինչպես հաղորդում է BBC-ն մինչև ճապոնական այս հեռուստաաշտարակի կառուցումը աշխարհի ամենաբարձր հեռուստաաշտարակը ճանաչված էր չինական Գուանչժուա քաղաքի 600 մետրանոց հեռուստաաշտարակը: Ի դեպ, նշենք, որ աշխարհի ամենաբարձր երկնաքարը համարվում է Դուբայի Բուրջ-խալիֆ շինությունը, որի բարձրությունը 828 մետր է:

Ճապոնիան ունի իր «Սափասնը» («Բազեն»)

Ինչպես հաղորդել է Ֆրանսսպրեսը, ճապոնիայում գործարկվել է նոր գերարագ գնացք՝ «Սափասն» կամ «Բազեն» գնացք, որի արագությունը ժամում 300 կիլոմետր է:

Եկող տարվանից գնացքի արագությունը կհասնի ժամում 320 կիլոմետրի, և այն կդառնա ճապոնիայի ամենարագ գնացքը: Օրը երկու անգամ այն կերթնելի Տոկիո-Սոնոբի (Շոնսյու կղզի) երթուղով: Արագության շնորհիվ ճապոնական «Բազեն» 675 կիլոմետր տարածքը կանցնի 3 ժամ 10 րոպեում: Համեմատության համար նշենք, որ ռուսական «Սափասնը» («Բազեն»), որ երթնելու է Մոսկվա-Սանկտ-Պետերբուրգ երթուղով, ժամում զարգացնում է 250 կիլոմետր և ճանապարհին անցնում է 3 ժամ 45 րոպեում:

Ճապոնական նոր գնացքի շարժակազմը կազմված է շատ բարձր հարմարավետության վագոններով: Ուղևորության գինը մեկ ուղևորությամբ կազմում է 26.360 իեն (320 դոլար): Հաղորդվում է, որ գործարկման հանդիսավոր արարողությունը հետաձգվել է 7 րոպեով: Պատճառը եղել է այն, որ մեկնումից առաջ ուղևորներից մեկը ընկել է կառամատույցից, և հազարավոր ճապոնացիներ հավաքվել են դեպքի վայրում՝ պատահարը լուսանկարելու:

Բարեբախտաբար, ուղևորը չի վնասվել և կարողացել է ելնել կառամատույց:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական, ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր տեղերի համար

Ավագ գիտաշխատող - Սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվական-վերլուծական կենտրոնում՝ 1 հաստիք,

Կրտսեր գիտաշխատող - Սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվական-վերլուծական կենտրոնում՝ 1 հաստիք:

Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում հետևյալ հասցեով՝ Երևան, Արշակունյաց 68, ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն», հեռ.՝ 57-29-24:

Գիտություն Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է փապրության՝ 21. 06. 2012 թ.: Տպարանակը՝ 500: "ГИТУТЮН" ("Hayka") gazeta HAH PA